Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-023[9]-20.07.2012-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1.Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 905-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Այն դեպքերում, երբ ցպահանջ չհանդիսացող ավանդը ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև ժամկետի ավարտը (կուտակային կենսաթոշակային ավանդի դեպքում՝ մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը) կամ մինչև բանկային ավանդի պայմանագրում նշված հանգամանքների վրա հասնելը, ավանդատուին տոկոսները վճարվում են բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, և տոկոսների այլ չափ նախատեսված չէ պայմանագրով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 968.9-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել նոր նախադասություններով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Ֆոնդի կառավարչի կողմից սույն մասով նախատեսված հատուցումն իրականացվում է ֆոնդի ***(բացառությամբ կենսաթոշակային ֆոնդի)*** համապատասխան մասնակիցներին ֆոնդի կառավարչի հաշվին ֆոնդի համապատասխան քանակի փայեր տեղաբաշխելու միջոցով, բացառությամբ հատուցման վճարման պահին տվյալ ֆոնդի մասնակից չհանդիսացող անձանց պատճառված վնասի, որիհատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելու միջոցով: Կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներին պատճառված վնասներ***ը*** հատուց***վում են*** օրենքով և ***այլ*** իրավական ակտերով ***սահմանված կարգով:».***

2) 2-րդ մասում «ֆոնդի ակտիվների կազմում ներառման ենթակա» բառերը փոխարինել «կարգով» բառով:

Հոդված 3. Օրենսգրքի 1014-րդ հոդվածը լրացնել 11-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ՝

«11. Կամավոր կուտակային կենսաթոշակային ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման առանձնակատկությունները սահմանվում են «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 4.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

««Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», ««Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», ««Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Ֆիրմային անվանումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» և ««Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ առաջարկությունների

	Առաջարկության հեղինակը	Բովանդակությունը	Եզրակացություն
«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ			
1.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/	Նախագծի 1-ին հոդվածի 7-րդ մասում լրացվող «գործատու» հասկացության մեջ «նոտար» բառից առաջ «Հայաստանի Հանրապետության» բառերը հանել: «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ գործող օրենքում հասկացությունների մեջ սահմանված է «նոտար» հասկացությունը՝ հղում տալով «Նոտարիատի մասին» ՀՀ	Ընդունվել է

	Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	օրենքին, հետևաբար նշված բառերն ավելորդ են:	
2.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	Նախագծի 6-րդ հոդվածը լրացնել 3-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «3) 1-ին մասի երկրորդ նախադասությունում «Այն անձանց համար, որոնց վերաբերյալ» բառերը փոխարինել «Եթե հարկային գործակալների, ինքնազբաղված անձանց, հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուի մոտ աշխատող՝ պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակից հանդիսացող վարձու աշխատողների կամ այդ գործատուից պայմանագրային եկամուտ ստացողների կողմից ներկայացված» բառերով», որը պայմանավորված է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության առավել հստակ ձևակերպման անհրաժեշտությամբ:	Ընդունվել է
3.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	Նախագծի 6-րդ հոդվածում ավելացնել 4-րդ մաս՝ որով «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասում միասնական մոտեցում սահմանելու տեսանկյունից, առաջարկվում է հանել «բացառությամբ հարցը ըստ էության լուծող դատական ակտի և ստուգման ակտի արդյունքում կատարված ճշտումների հիման վրա» արտահայտությունը:	Ընդունվել է
4.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128	Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում առավել հստակ ձևակերպելու տեսանկյունից	Ընդունվել է

	ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	առաջարկվում է «մեկ տոկոս մասնակցություն» բառերից հետո լրացնել «՝ իր միջոցներից» բառերը:	
5.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	Նախագծի 28-րդ հոդվածով խմբագրվող՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասում առավել հստակ ձևակերպելու տեսանկյունից առաջարկվում է «սահմանված կարգով» բառերից առաջ լրացնել «համատեղ» բառը:	Ընդունվել է
6.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին կետում «հաշվետվությունը» և «հաշվարկը» բառերն անհրաժեշտ է փոխարինել համապատասխանաբար «հաշվետվություն» և «հաշվարկ» բառերով՝ նկատի ունենալով, որ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետում նման բառ չկա:	Ընդունվել է
7.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/	28-րդ հոդվածի նախաբանն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ «Օրենքի 60-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.», իսկ չակերտներից առաջ նշել հոդվածի վերնագիրը՝ «Հոդված 60. Միանվագ վճար» բառերով:	Ընդունվել է

	Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/		
8.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	Անհրաժեշտ է 29-րդ հոդվածի 3-րդ ենթակետում «արտասահման» բառը փոխարինել «օտարերկրյա պետություն» բառերով՝ համաձայն «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի պահանջների: Նույն դիտողությունը վերաբերում է նաև 33-րդ հոդվածի 3-րդ կետին:	Ընդունվել է
9.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	Նախագծի 30-րդ հոդվածի 4-րդ մասում «փայերի ժառանգություն» արտահայտությունը փոխարինել «մահացածի փայերը, որպես օրինական ժառանգի սեփականություն» արտահայտությամբ:	Ընդունվել է
10.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան	Նախագծի 30-րդ հոդվածի 5-րդ մասը խմբագրել հետևյալ կերպ «8-րդ մասը խմբագրել հետևյալ կերպ. «Սույն հոդվածի 7-րդ մասի կանոնները կիրառվում են նաև այն դեպքերի վրա, երբ մասնակցի կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո՝ 10 տարվա ընթացքում, մասնակցի կուտակային կենսաթոշակային	Ընդունվել է

	/077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	հաշվին չի մուտքագրվել որևէ գումար կամ չի տրվել ծախս կատարելու որևէ հանձնարարական» բառերով:	
11.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	Նախագծի 31-րդ հոդվածի 1-ին կետի «ե» ենթակետում անհրաժեշտ է նշել, թե որ կետում է կատարվում փոփոխությունը, միաժամանակ՝ հայտնում ենք, որ պարբերությունը չեն հանում, այլ ուժը կորցրած են ճանաչում՝ համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի:	Ընդունվել է
12.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	Նախագծի 39-րդ հոդվածի 2-րդ կետում հղում է տրված «Անվճարունակության մասին» ՀՀ օրենքին: Հայտնում ենք, որ ՀՀ օրենսդրությունում նման օրենք չկա:	Ընդունվել է
13.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/	Նախագծի 39-րդ հոդվածի 2-րդ կետի վերջին պարբերությունում «քաղաքացիական օրենսդրությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «քաղաքացիական օրենսգրքով» բառերով	Ընդունվել է

	Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/		
14.	Գ.Նուշիկյան /010 ընտրատարածք/	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ի մասում լրացվող 34-րդ կետում «օրենքով» բառից առաջ լրացնել հետևյալ բառերը «աշխատանքային կամ աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա կամ»:	Չի ընդունվել, քանի որ «օրենքով սահմանված կարգով աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող» եզրույթը ներառում է նաև «աշխատանքային կամ աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա»
15.	Գ.Նուշիկյան /010 ընտրատարածք/	Նախագծի հոդված 4-ով խմբագրվող Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասում երկու անգամ նշված «ինքնազբաղված» բառից հետո լրացնել «անձ» բառը:	Ընդունվել է
16.	Գ.Նուշիկյան /010 ընտրատարածք/	Նախագծի 11-րդ հոդվածով խմբագրվող Օրենքի 16-րդ 1-ին մասի 11-րդ կետում «կամահայտության հիման վրա» բառերը փոխարինել «կամավոր համաձայնության դեպքում» բառերով	Չի ընդունվել, քանի որ ժառանգը պետք է հայտնի իր կամքը և հանձնարարի կատարել գործողություն, այլ ոչ թե համաձայնվի:
17.	Գ.Նուշիկյան /010 ընտրատարածք/	Նախագծի 22-րդ հոդվածով խմբագրվող Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասում «Մասնակիցներ» բառի փոխարեն պետք է լինի «Մասնակիցների» բառը	Ընդունվել է
18.	Գ.Նուշիկյան /010 ընտրատարածք/	Նախագծի 35-րդ հոդվածի վերնագրում «1.1-րդ» գրառումը փոխարինել «1.1-ին» գրառմամբ:	Ընդունվել է
19.	Գ.Նուշիկյան /010 ընտրատարածք/	Նախագծի 39-րդ հոդվածի 2-րդ կետում հղում է տրված «Անվճարունակության մասին» ՀՀ օրենքին, որը գոյություն չունի: Փոխարենը գոյություն ունի «Սնանկության մասին» ՀՀ օրենքը:	Ընդունվել է, տես կետ 12:

		Հետևապես, առաջարկում եմ փոփոխություն կատարել և սույն հոդվածում ներառել տվյալ օրենքի ճիշտ անվանումը:	
«Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.			
20.	ՀՀ կառավարություն	հանել Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետը: Բանն այն է, որ հիշյալ կետով առաջարկվող փոփոխությունն արդեն իսկ տեղ է գտել գործող օրենքում: Ավելին, ուժը կորցրած է ճանաչվել «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքը, որին հղում է կատարվում նախագծում	Ընդունվել է
21.	ՀՀ կառավարություն	Նախագծի 16-րդ հոդվածի 3-րդ կետում «կառավարչի» բառից հետո լրացնել ոչ թե «գործունեության (աշխատանքի) կանոնակարգեր և», այլ «գործունեության (աշխատանքի) կանոնակարգերի,» բառերով, քանի որ հակառակ դեպքում հոդվածի ձևակերպումն անհասկանալի է դառնում	Ընդունվել է
22.	ՀՀ կառավարություն	հանել Նախագծի 16-րդ հոդվածի 2-րդ կետը: Բանն այն է, որ հիշյալ կետով առաջարկվող փոփոխությունն արդեն իսկ տեղ է գտել գործող օրենքում: Ավելին, ուժը կորցրած է ճանաչվել «Ֆիրմային անվանումների մասին» ՀՀ օրենքը, որին հղում է կատարվում նախագծում	Ընդունվել է
23.	ՀՀ կառավարություն	Նախագծի 19-րդ հոդվածի 2-րդ կետի առաջին պարբերությունում «պահառուն» բառը փոխարինել «կառավարիչը» բառով, քանի որ կառավարչի՝ իր ֆիդուցիար պարտականությունների շրջանակում գործելու ապացուցման պարտականությունը պետք է կրի ոչ թե պահառուն, այլ կառավարիչը:	Ընդունվել է
24.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/	Նախագծից հանել 20-րդ հոդվածը:	Ընդունվել է

	Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/		
25.	Գ.Նուշիկյան /010 ընտրատարածք/	Նախագծի հոդված 4-ով Օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվող փոփոխության մեջ առաջարկում եմ «կառավարչի եւ պահառուի» բառերը փոխարինել «կառավարչի, պահառուի և գործակալի» բառերով	Չի ընդունվել: Օրենքի 17-րդ հոդվածը սահմանում է միայն այն ծախսերը, որոնք ուղղակիորեն կապված են ներդրումային ֆոնդի կառավարման հետ: Այդ ծախսերը չեն ներառում գործակալի վճարները: Գործակալի հետ կապված ծախսերը կատարվում են ոչ թե ֆոնդի, այլ կառավարչի հաշվին, ուստի դրա կարգավորման անհրաժեշտություն չկա:
«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.			
26.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/	Անհրաժեշտ ենք համարում 2-րդ հոդվածի 1-ին կետի առաջին նախադասության մեջ «իրականացվում է ֆոնդի» արտահայտությունից հետո լրացնել «(բացառությամբ կենսաթոշակային ֆոնդի)» արտահայտությունը, իսկ երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Կենսաթոշակային ֆոնդի մասնակիցներին պատճառված վնասները հատուցվում են օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:»:	Ընդունվել է

	Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/		
27.	Գ.Նուշիկյան /010 ընտրատարածք/	Սոցիալական անհրաժեշտությունից ելնելով՝ առաջարկում եմ Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքի 905-րդ հոդվածում կատարվող փոփոխության մեջ կատարել բացառություն Նախագծերի փաթեթի մեջ ներառված «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածում նշված առողջական ծայրահեղ ծանր վիճակում գտնվող և կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով հիվանդ մասնակիցների համար: Այդ մասնակիցները կուտակային կենսաթոշակային ավանդի՝ վաղաժամկետ ետ ստանալու դեպքում պետք է իրավունք ունենան ամբողջությամբ պահանջելու կուտակված տոկոսները՝ հաշվարկված ժամկետային ավանդի տոկոսադրույքով	Չի ընդունվել: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների նախագծի հիշյալ հոդվածում հստակ նշված է, որ ցպահանջ ավանդների համար սահմանված տոկոսների մասին դրույթը գործում է, *եթե այլ բան սահմանված չէ օրենքով*: Իսկ այդ բացառությունը տեղ է գտել «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների նախագծի 33-րդ հոդվածի 3-րդ կետում, համաձայն որի՝ Նախքան կենսաթոշակային տարիքը լրանալը միանվագ վճար կատարելու համար պայմանագրով կարող է նախատեսվել առավել մեծ մարման վճար, տուգանք և (կամ) ավելի ցածր տոկոսներ, բացառությամբ եթե նման պահանջը ներկայացվել է այնպիսի մասնակցի կողմից, ով գտնվում է առողջական

			ծայրահեղ ծանր վիճակում կամ հիվանդ է կենսական կարևոր օրգանների անբուժելի ախտահարումներով և այլն: Այլ կերպ ասած՝ առաջարկվող փոփոխությունն արդեն իսկ արտացոլված է փաթեթում ներառված այլ նախագծում:
«Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.			
28.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	Նախագծով առաջարկվող՝ Եկամտային հարկի եւ պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «ինքնազբաղված» բառը փոխարինել «ինքնազբաղված անձ» բառերով	Ընդունվել է
29.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/	Նախագծով առաջարկվող՝ «Եկամտային հարկի եւ պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» պարբերությունը «անձնագրի» բառից հետո լրացնել «և, առկայության դեպքում, նույնականացման քարտի» բառերով, իսկ «անձնագիրը» բառից հետո լրացնել «և	Ընդունվել է

	Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	նույնականացման քարտը» բառերով:	
30.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	Նախագծով առաջարկվող՝ Եկամտային հարկի եւ պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 10. Տեղեկատվական բազան ձեւավորելու համար անհրաժեշտ տվյալները գործատուների կողմից ներկայացնելը 1. Գործատուն (հարկային գործակալը) գրանցման հայտ է ներկայացնում յուրաքանչյուր անգամ. 1) վարձու աշխատողին աշխատանքի ընդունելու (քաղաքացու հետ օրենքով սահմանված կարգով աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու), վարձու աշխատողին աշխատանքից ազատելու (օրենքով սահմանված կարգով աշխատանքային հարաբերությունները դադարելու) դեպքում, 2) քաղաքացու հետ քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու, քաղաքացու հետ կնքված քաղաքացիաիրավական պայմանագրի գործողության ժամկետը ավարտվելու (պայմանագիրը լուծելու, դադարելու) դեպքում, 3) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված՝ վարձու աշխատողին չվճարվող արձակուրդ, մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ տրամադրելու, այդ արձակուրդը ավարտվելու դեպքում, 4) տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած վարձու աշխատողի կողմից պարտադիր կուտակային վճարներ կատարելը դադարեցնելու մասին գործատուին դիմում ներկայացնելու դեպքում, 5) սույն մասով սահմանված՝ գրանցման հայտի հիման վրա ներկայացված որևէ տվյալում (այդ թվում՝ վարձու	Ընդունվել է

		աշխատողի պաշտոնին վերաբերող) փոփոխություն կատարելու դեպքում: 2. Գործատուի (հարկային գործակալի) ներկայացրած անձնավորված հաշվարկը պարունակում է. 1) անձնավորված տեղեկություններ նախորդ ամսվա (տարվա) ընթացքում իր կողմից հաշվարկած աշխատավարձի ու դրան հավասարեցված այլ եկամուտների, պայմանագրային եկամուտների, այդ եկամուտներից հաշվարկված եկամտային հարկի, իսկ կուտակային կենսաթոշակային համակարգում ներառված անձանց մասով՝ նաեւ կուտակային վճարների վերաբերյալ, ինչպես նաեւ սույն օրենքի 7-րդ հոդվածով սահմանված այլ տվյալներ, 2) ամփոփ տեղեկություններ նախորդ ամսվա ընթացքում տվյալ հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց համար հաշվարկված պասիվ եկամուտների, այդ եկամուտներից պահված եկամտային հարկի վերաբերյալ: 3. Գործատուի (հարկային գործակալի) ներկայացրած գրանցման հայտում և անձնավորված հաշվարկում ներառվող տեղեկատվության բովանդակությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: 4. Գործատուները (հարկային գործակալները) գրանցման հայտերը լիազոր մարմին են ներկայացնում մինչև սույն հոդվածի 1-ին մասով սահմանված հանգամանքն առաջանալու (հաշվետու) ամսվա համար անձնավորված հաշվարկը ներկայացնելը, իսկ հաշվետու ամսվա համար անձնավորված հաշվարկները լիազոր մարմին են ներկայացնում մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը: 5. «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարկային գործակալ հանդիսացող Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհամարվող կազմակերպությունները մինչև հաջորդ տարվա ապրիլի 15-ը	

		էլեկտրոնային եղանակով հարկային մարմին են ներկայացնում պարտադիր կուտակային վճարի տարեկան անձնավորված հաշվարկ: 6. Օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային գործակալի պարտականություններից ազատված գործատուն սույն օրենքով սահմանված կարգով ներկայացնում է միայն գրանցման հայտ՝ իր վարձու աշխատողների եւ պայմանագրային եկամուտ ստացողների համար:»:	
31.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	Նախագծով առաջարկվող՝ Եկամտային հարկի եւ պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասում «կազմը» բառը փոխարինել «բովանդակությունը» բառով	Ընդունվել է
32.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	Նախագծով առաջարկվող՝ «Եկամտային հարկի եւ պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանել հետևյալ խմբագրությամբ. 3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում պահպանել գործատուների և ֆիզիկական անձանց կողմից ներկայացված գրանցման հայտերն ու անձնավորված հաշվարկները.»:	Ընդունվել է
33.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/	Նախագծի 12-րդ հոդվածի մասերի համարակալումն անհրաժեշտ է ճշտել՝ նկատի ունենալով, որ 3-րդ մասին հաջորդում է 6-րդ	Ընդունվել է

	Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	մասը	
34.	ՀՀ կառավարություն	Հստակեցնել Նախագծի հոդվածների համարակալումը	Ընդունվել է
35.	Գ.Նուշիկյան /010 ընտրատարածք/	Նախագծով խմբագրվող Օրենքի 3-րդ հոդվածում «անհատ ձեռնարկատեր», «նոտար» հասկացությունները միջնորդավորված տեսքով հղում են արված «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքին: Առաջարկում եմ տվյալ հասկացությունների հղումներն անմիջականորեն անել հիմնական օրենքներին՝ համապատասխանաբար ՀՀ օրենքին և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքին:	Ընդունվել է
36.	Գ.Նուշիկյան /010 ընտրատարածք/	«գործատու» հասկացությունը սահմանված է Նախագծերի փաթեթի մեջ ներառվող «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքում (հոդված 1, կետ 7): Առաջարկում եմ Նախագծով խմբագրվող Օրենքում հղում տալ այդ օրենքին՝ կրկնակի գրառումներից խուսափելու համար:	Ընդունվել է
37.	Գ.Նուշիկյան /010 ընտրատարածք/	Նախագծով խմբագրվող Օրենքի 5-րդ հոդվածում նշված «խորհրդապահական են» բառերը փոխարինել «համարվում են ֆիզիկական անձին վերաբերվող գաղտնի տեղեկություններ» բառերով:	Չի ընդունվել: <<Խորհրդապահական տեղեկատվություն>> տերմինը, որպես անհատական տվյալների իրավական ռեժիմ, կիրառվում է <<Անհատական

			տվյալների մասին>> ՀՀ օրենքում, որի 3-րդ հոդվածով տրված է դրա բացատրությունը (*խորհրդապահական տեղեկատվություն*՝ տեղեկատվություն, որի մատչելիությունը սահմանափակված է օրենքով):
38.	Գ.Նուշիկյան /010 ընտրատարածք/	Նախագծով խմբագրվող Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում «ներկայացնում մինչև յուրաքանչյուր ամսվա 20-ը» բառերը փոխարինել «ներկայացնում յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը» բառերով:	Նախագծով առաջարկվող 10-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ (ըստ սույն առաջարկների 30-րդ կետի), որտեղ ըստ էության ընդունված է առաջարկությունը (տես 10-րդ հոդվածի 4-րդ մասը)
«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.			
39.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան	Առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածից հանել «, ինչպես նաև 8-րդ հոդվածի 1-ին մասում երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ անգամ հանդիպող» բառերը:	Ընդունվել է

	/006 ընտրատարածք/		
40.	ՀՀ կառավարություն	Առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածի 6-րդ ենթակետում «արտահայտությունը» բառը փոխարինել «բառերը» բառով:	Ընդունվել է
41.	ՀՀ կառավարություն	Առաջարկում ենք նախագծի 3-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11-րդ և 12-րդ ենթակետերով. «11) 3-6-րդ կետերում և օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում «ապահովագրության պայմաններով» բառերը փոխարինել «սխեմայի շրջանակում» բառերով, 12) 3-6-րդ կետերում և օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասում «կենսաթոշակային ապահովագրության վճարները» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «վճարները» բառով՝ համապատասխան հոլովաձևերով»:	Ընդունվել է
42.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ ենթակետը հանել, քանի որ օրենքի 9-րդ հոդվածը «լ» և «լա» կետեր չունի:	Ընդունվել է
43.	ՀՀ կառավարություն	Առաջարկում ենք նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ ենթակետում «5-րդ կետը» բառերը փոխարինել «5-րդ մասը» բառերով, «նոր նախադասությամբ» բառերը՝ «նոր պարբերությամբ» բառերով, իսկ նշյալ ենթակետով օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասում լրացվող նոր պարբերության «՝ այդ դեպքում հարկը հաշվարկվում է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված դրույքաչափերով» բառերը շարադրել որպես առանձին նախադասություն:	Ընդունվել է
44.	ՀՀ կառավարություն	Առաջարկում ենք նախագծի 8-րդ հոդվածի 4-րդ ենթակետում	Ընդունվել է

		«կետում» բառը փոխարինել «մասում» բառով:	
45.	ՀՀ կառավարություն	Առաջարկվում է նախագծի 8-րդ հոդվածի 5-րդ ենթակետում «կետում» բառը փոխարինել «մասում» բառով:	Ընդունվել է
46.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	Առաջարկում ենք նախագծի 8-րդ հոդվածի 6-րդ կետով վերախմբագրվող՝ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «8. Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող և (կամ) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված գործունեության տեսակների մասով անհատ ձեռնարկատերերը եկամտային հարկը հաշվարկում և վճարում են ամսական 5 հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), որը նրանց համար համարվում է եկամտային հարկի գծով վերջնական հարկային պարտավորություն, իսկ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 1-ի և հավելված 2-ի ցանկերում ընդգրկված գործունեության տեսակների մասով եկամտային հարկ չի հաշվարկվում և չի վճարվում: Հաշվետու ժամանակաշրջանում միաժամանակ և (կամ) հաջորդաբար հարկման տարբեր համակարգերով գործունեություն իրականացնելու դեպքում՝ 1) հաստատագրված վճարների և (կամ) արտոնագրային վճարների օբյեկտ համարվող գործունեության տեսակներից ստացված (անհատ ձեռնարկատերերի համար՝ ստացման ենթակա) եկամուտները և այդ ժամանակահատվածին վերաբերող նվազեցումները, ինչպես նաև վճարված հաստատագրված վճարներն ու արտոնագրային վճարները հաշվի չեն առնվում հարկման ընդհանուր համակարգում	Ընդունվել է

		գտնվող գործունեության տեսակների մասով հարկվող եկամուտը որոշելիս, 2) հարկման ընդհանուր համակարգում գտնվող, ինչպես նաև հաստատագրված վճարների և (կամ) արտոնագրային վճարների օբյեկտ համարվող գործունեության տեսակների մասով անհատ ձեռնարկատերը վարում է եկամուտների և նվազեցումների առանձնացված հաշվառում (ըստ հարկման համակարգերի), իսկ ժամանակաշրջանի ծախսերը (որոնք ըստ հարկման համակարգերի հնարավոր չէ առանձնացնել) բաշխվում են՝ ելնելով ընդհանուր համախառն եկամտի մեջ հարկման տարբեր համակարգերում գտնվող գործունեության տեսակներից ստացված (ստացվող) եկամուտների տեսակարար կշիռներից (ըստ հարկման համակարգերի համախառն եկամուտների և նվազեցումների առանձնացված հաշվառում չվարելու դեպքում դրանց մեծությունը կարող է որոշվել «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով):»:	
47.	ՀՀ կառավարություն	Առաջարկում ենք նախագծի 9-րդ հոդվածով վերախմբագրվող՝ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետից հանել «և այլ պասիվ եկամուտներից (բացի փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներից)» բառերը, իսկ 3-րդ ենթակետում «այլ եկամուտներից» բառերը փոխարինել «այլ հարկվող եկամուտներից» բառերով:	Ընդունվել է
48.	ՀՀ կառավարություն	Առաջարկում ենք նախագծի 10-րդ հոդվածի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1) 1-ին մասի երկրորդ պարբերությունից հանել «ծրագրեր իրականացնող» բառերը, իսկ «ծրագիր իրականացնող» բառերը փոխարինել «այդ» բառով,»:	Ընդունվել է
49.	ՀՀ կառավարություն	Առաջարկում ենք նախագծի 10-րդ հոդվածում լրացնել նոր՝ 3-րդ ենթակետ՝ հստակեցնելու համար այն դեպքերը, երբ եկամուտներ վճարողը չի հանդիսանում հարկային գործակալ,	Ընդունվել է

		ներառյալ այն դեպքերը, երբ վճարվող եկամուտները չեն համարվում բազային եկամտի տարր:	
50.	ՀՀ կառավարություն	Առաջարկում ենք նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ ենթակետով վերախմբագրվող՝ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետում «վայրի հասցե» բառերը փոխարինել «վայրը» բառով:	Ընդունվել է
51.	ՀՀ կառավարություն	Առաջարկում ենք նախագծի 14-րդ հոդվածի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «4) 9-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:»:	Ընդունվել է
52.	ՀՀ կառավարություն	Առաջարկվում է նախագծի 18-րդ հոդվածում «հարկային մարմնի կողմից» բառերը փոխարինել «լիազոր մարմնի կողմից» բառերով:	Ընդունվել է
53.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/ Խ. Հարությունյան /128 ընտրատարածք/ Ա.Մխիթարյան /077 ընտրատարածք/ Վ.Մարկոսյան /014 ընտրատարածք/ Ռ.Հովսեփյան /006 ընտրատարածք/	Առաջարկվում է նախագծի 19-րդ հոդվածի 2-րդ ենթակետում «3-րդ մասով» բառերը փոխարինել «3-5-րդ մասերով» բառերով՝ նախագծի 19-րդ հոդվածի 2-րդ ենթակետը լրացնելով հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով. «4. Մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը աշխատանքային պայմանագիրը լուծվելու և վարձու աշխատողի հետ վերջնահաշվարկի գումարները 2013 թվականի ընթացքում վճարվելու դեպքում այդ գումարների նկատմամբ հարկերը և (կամ) պարտադիր սոցիալական ապահովության վճարները հաշվարկվում են մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը գործող օրենքներին համապատասխան: 5. Մինչև սույն օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգի սահմանումը, բայց ոչ ուշ, քան մինչև 2013 թվականի հուլիսի 1-ը, սույն օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված չափերով եկամտային հարկի գումարները հաշվարկվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգով աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու փաստն արձանագրելու դեպքերում:»:	Ընդունվել է

54.	Գ.Նուշիկյան /010 ընտրատարածք/	Նախագծի 6-րդ հոդվածի նախաբանում «8.1-րդ» գրառումը փոխարինել «8.1-ին» գրառմամբ:	Ընդունվել է
55.	Գ.Նուշիկյան /010 ընտրատարածք/	Նախագծից ընդհանրապես հանել 6-րդ հոդվածը:	Չի ընդունվել: Նախագծի 6-րդ հոդվածով «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում լրացվող նոր՝ 8.1-րդ հոդվածով առաջարկվող մոտեցումները ներկայումս ամրագրված են «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով: Ինչ վերաբերում է ֆիզիկական անձի՝ անշարժ գույքի օտարումից ստացվող եկամտի հարկմանը, ապա հայտնում ենք, որ այն դեպքում, երբ ֆիզիկական անձն իր գույքը վաճառում է հարկային գործակալ հանդիսացող սուբյեկտին, ապա գույքի օտարումից ստացվող եկամուտները ենթակա են եկամտահարկով հարկման (հիմք՝ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդված, 5-րդ մաս): Ինչ վերաբերում է գրավադրված գույքի օտարումից ստացվող

			եկամուտների՝ եկամտային հարկով հարկմանը, ապա հայտնում ենք, որ նախագծի համաձայն, եկամտային հարկով հարկվելու է ոչ թե գրավադրված գույքի օտարումից ստացվող ամբողջ եկամուտը, այլ այդ եկամտի և գրավատուի ունեցած վարկային պարտավորության տարբերությունը, ինչն արդեն իսկ հարկման արտոնյալ պայմաններ է նախատեսում գրավատուի համար:
56.	ՀՀ կառավարություն	Ավելացնել նոր հոդված, որով կսահմանվի օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը:	Ընդունվել է
Այլ առաջարկություններ			
57.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/	Փաթեթը լրացնել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով	Ընդունվել է
58.	Հ.Հակոբյան /024 ընտրատարածք/	Փաթեթը լրացնել «ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով	Ընդունվել է